



Բաժնեգին տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 10 Ֆր. Պալք անան երկիրներ 50 Սէնթ, արտասահման 60 Սէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

Թիի 7

Է. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1931

ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ԼԵՑՈՒԻԼ

Կարելի չէ Պէնտէկոստէի պատմութիւնը կարգալ եւ չլեցուիլ Սուրբ Հոգիին գորութիւնը ստանալու բաղձանքով: Նոյնպէս Աստուծոյ բաղձանքն է որ Իրենները լեցուին Իր Հոգիովը, որու կարգ մը խիստ պարզ պայմաններ միայն կ'են:

Ա. Սուրբ Հոգիով լեցուելու առաջին պայմանն է՝ վերստին ծնած ըլլալ: Անոնք միայն որ արգէն Սուրբ Հոգիէն ծնած են եւ իրենց մէջ կ'զգան Անոր ներկայութիւնը, կրնան լեցուիլ Սուրբ Հոգիով:

Բ. Ի՞նչ է մեր Սուրբ Հոգիով լեցուելու փափաքին շարժառիթը: Մեր շարժառիթը ըլլալու է մի միայն զԱստուծոյ փառաւորել: Եթէ մեր շարժառիթն է աւելի մեծ զործեր տեսնել եւ մարդոցմէ գնահատուիլ, չենք կրնար Սուրբ Հոգիով լեցուիլ, քանզի Աստուծոյ զանոնք միայն կը լեցնէ Իր Հոգիովը, որոնք Իր փառքը միայն կը փնտռեն:

Անգամ մը Ֆրանսիոյ Ասիսիոյ հարցուեցաւ թէ ինչպէ՞ս կարող եղած էր այնքան գործ տեսնել Աստուծոյ համար: Անիկա պատասխանեց, «Տէրը երկինքէն վար նայելով ըսաւ, Ո՛ր կրնամ գտնել ամենատկար, ամենափոքր եւ ամենանուաստ մարդը եւ զիս տեսնելով շարունակեց, «Ահա զայն գտայ եւ Ես անոր միջոցով պիտի գործեմ, քանզի անիկա զիտնալով թէ ես զինքը կը գործածեմ իր փոքր ու աննշան ըլլալուն համար, պիտի չհպարտանայ»:

Գ. Աստուծոյ Իր Հոգին անոնց կուտայ որ կը

հնազանդին, (Գործ. Ե. 32): Ինչ չափով որ կը հնազանդինք, նոյն չափով կ'ստանանք Աստուծոյ այս օրհնեալ պարգեւը: Եթէ Աստուծոյ մեր կեանքին մէջ բաներ մը ցուցնէ որոնցմէ զատուելու ենք, ինչպէս անձնասիրութիւն, հպարտութիւն, բարկութիւն, նախանձ, սխալ հասկացողութիւն եւայլն, հնազանդինք Անոր, քանզի եթէ չհնազանդինք, չենք կրնար լեցուիլ Անոր Հոգիովը: Սակայն մեր հնազանդութեան շարժառիթը «գորութիւն ստանալ» ըլլալու չէ, հապա «Սէր առ Բրիստոս»:

Դ. «Սուրբ Հոգիի գորութիւն» ըսելով մենք «եւթարական ցնցում» մը, կամ «յափշտակութիւն» մը երեւակայելու չենք, այլ՝ ըմբռնելու ենք Անձնաւորութիւն մը, զոր աւելի լաւ ճանչնալու ենք, որու հետ աւելի մտերիմ հաղորդակցութիւն ունենալու, որուն աւելի նուիրուելու ենք, զոր աւելի սերտելու եւ որմէ միայն կառավարուելու բաղձանքը ունենալու ենք, եւ այդ անձնաւորութիւնն է Սուրբ Հոգին Աստուծոյ, որ կը սիրէ մեզ ամէն միտքէ վեր եղող սիրով մը: Մեր մէջ գտնուող Սուրբ Հոգին պատրաստ է մեզ Իր գորութեամբ լեցնելու, եթէ միայն ինքզինքնիս Իրեն յանձնենք կատարելապէս առանց վերապահումի. եթէ Իրեն իսպառ զնենք մեր կարողութիւնները, մեր գորութիւնը, մեր ծրագիրները եւ մեր կեանքը:

Ո՛չ մէկ մարդ իր անձին միայն կ'ապրի: Մենք

չենք կրնար Սուրբ Հոգիով լեցուիլ որչափ ժամանակ որ մեր մէջ դառնութեան արմատ մը կամ որեւէ ուրիշ սխալ երեւնայ մեր ընկեր արարածներուն հանդէպ: Աբրոյ հակառակ որեւէ շարժառիթ կամ գործ արդիւք կ'ըլլայ մեր Սուրբ Հոգիով լեցուելուն:

— Զ. Մենք մեր Սուրբ Հոգիով լեցուելուն մասին ծրագիրներ կազմելու չենք. այսինքն խորհելու չենք թէ այս կամ այն կերպով ինչպէս «գօրաւոր հովի մը միջոցաւ», «լեզուներ խօսեցնելով» կամ «կրակէ լեզուներու» երեւութով երեւնալու է մեզի: Աստուծոյ ծրագիրները միշտ աւելի բարձր են մեր ծրագիրներէն եթէ միայն հնազանդութեամբ Անոր յանձնուինք: Պատրաստ ենք Սուրբ Հոգիին առաջնորդածին պէս գործելու եւ վկայելու:

Է. Վերոյիշեալ վեց պայմանները կատարելէ վերջ միայն մէկ պայման կը մնայ որ է՝ ընդունիլ Սուրբ Հոգիին լեցունութիւնը:

Նշանաւոր աւետարանիչ մը քաղաքի մը մէջ աւետարանչական ժողովներ ընելու պահուն, այդ քաղաքին մարդոց փրկութիւնը իր սրտին վրայ այնքան ծանրացած զգաց որ կանչեց եկեղեցիին մէջ գտնուող քրիստոնէաներէն մէկ քանին եւ ըսաւ, «Առանց Սուրբ Հոգիին լեցունութեանը մեր կազմակերպած ծրագիրները պարապ պիտի ըլլան»: Այս խօսքին վրայ հոն գտնուողներէն մէկը, որ շատ քիչ կը թուէին ունեցող երիտասարդ մըն էր, գլխարկը ձեռքը տոած դուրս ելաւ: Աւետարանիչը իր խօսքերը լրացունելէն վերջ՝ երբ կը մեկնէր սրահէն, քովի սենեակէն ձայն մը լսեց: Զարմացած ներս մտնելով գտաւ յիշեալ երիտասարդը Աստուծոյ առջև երեսի վրայ ինկած: Անիկա տակաւին կ'աղօթէր: «Ով Աստուած», կ'ըսէր ան, «Վերէն այս գօրութիւնը կը խնդրեմ քեզ մէջ»: Ժամանակ մը լռելէ վերջը շարունակեց, «Ով Հայր, վասն քեզի վկայելու համար՝ պատրաստ եմ գատուիլ ամէն մեղքէ գոր ինծի կը յայտնես»: Կրկին լռութիւն տիրեց: Կարծես անիկա իր անցեալ կեանքը կ'անցնէր իր աչքին առջեւէն: «Այո, պիտի հրաժարիմ առկէ, այո, պիտի հրաժարիմ», շարունակեց անիկա: Յետոյ ոտքի ելլելով դէպի երկինք նայեցաւ ու ըսաւ, «Եւ հիմա, ով Հայր, ես կ'ընդունիմ քու օրհնութիւնդ»: Ծիշդ այդ վայրկեանին՝ աւետարանիչը իր քովը նշմարելով՝ փայլուն դէմքով մը անոր նայեցաւ եւ անոր ձեռքը սեղմելով ըսաւ, «ԶԱյն ստացայ, զԱյն ստացայ»: Այս պարագան երիտասարդին ամբողջ կեանքը փոխեց եւ հակառակ իր կըթութեան սկսեցինք անիկա քանի մը ամսուան մէջ կարող եղաւ վաթսուս հոգի Քրիստոսի առաջնորդել:

ԱՆԾԱՆՕԹ ՔՐԻՍՏՈՆԵԱՆ



Ի՞ՆՉ ՅՈՅՍ ՈՒՆԻՍ ԴՈՒՆ

— «... եւ միշտ պատրաստ եղէք հեզու. Թեամբ ու երկեղածութեամբ պատրաստ աւելու ամենուն որ ձեր ունեցած յոյսին արտօնար ձեզի կը հարցնեն»: Ա. Պետ. Գ. 45

Ելք այս փոփոխութիւնով կ'ըսենք, կ'ենքիդ միշտ խաբխուլ մակոյկն հողմաւոր, Սահի մահուան մուտք անդունդն անդունդ, ի՞նչ յոյս ունիս դուն փրկութեանդ համար:

— Եւ՝ յոյս մը ունիմ, յոյս մը մշտապէս ջի Աստուածորդին է իմ նաւաւոր:

Ելք այս արեւշատ երկինքդ զուարթ, Ծածկուի կեանքի խոփու ամպերով: Այդ մուտք, ահաւոր պահուն ո՛վ խեղճ մարդ ի՞նչ յուսով կրնաս մնալ անխռով:

— Այդ հոգեւարսուս, մահացու պահուն, Յիսուս իմ յոյսս է, շանթարգել տուիւն:

Երբ կեանքի դաժան, խօլ պայքարին մէջ, Կուրծքէդ զարնուիս եւ իյնաս թշուառ, Այդ ճգնաժամին սարսափով մ'անշէջ... Որո՞ւ պիտ' դիմես փրկութեանդ համար:

— Ես՝ Աստուած մ'ունիմ ինծի օգնական, Որ զիս կը գրկէ սիրով մ'հայրական:

Եւ գուցէ օրերդ շատ հանդարտ սահին, Բայց անշուշտ օր մը արեւդ պիտ' մարի. Յայնժամ դողահար մահուան սահանքին՝ Մեղաւոր կեանքդ ո՞ր պիտ' երկարի...

— Իմ կեանքս պահուած է Տէր Յիսուսի մէջ, եւ Յիսուս յոյսիս արեւն է անշէջ...

ՍԱՄՈՒԷԼ Պ.

ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏԿԵՐԻՆ ԿԵՐՊԱՐԱՆԱԿԻՑ

Վասնզի զանոնք որ առաջ կը ճանցնար, առաջունէ ալ սահմանեց իր Որդւոյն պատկերին կերպարանակից ըլլալու: Հռովմ. Բ. 29

Միակ պայմանը՝ որով մենք կարող կ'ըլլանք Յիսուսի պատկերին կերպարանակից ըլլալ, Անոր սուրբ արեան մեր երակներուն մէջ շրջան ընելն է: Ուրեմն մենք Գառնուկին մարմինը ուսելու եւ Անոր արեանը խմելու ենք: Գողգոթայի վրայ թափուած արեանը նշանակութիւնը իրապէս հասկնալու եւ մորթուած Գառնուկին հետ նոյնանալու, որպէսզի այլեւս մեզի համար չապրինք, այլ Անոր՝ որ մեզի համար մեռաւ ու յարութիւն առաւ: Քրիստոսի մարմինը ուսել եւ Անոր արեանը խմել կը նշանակէ զԱյն մեր մէջը ընդունիլ, Անոր խորհածը խորհիլ: «Մենք Քրիստոսի

միտքը ունինք», կ'ըսէ Պողոս առաքեալ: Ամէն ինչ վնաս սեպեալու ենք որպէսզի Քրիստոսը շահինք եւ Սուրբ Հոգւոյն վկայութիւնը ունենանք թէ մենք Աստուծոյ հաճելի ենք: Ան որ մեզի համար մեռաւ եւ մեզի համար յարութիւն առաւ, տիրելու է մեր վրայ եւ զործածելու մեզ մեր, երբ եւ ինչպէս որ կ'ուզէ: Ընտրութիւնը Անոր յանձնելու ենք: Ինչպէս որ մեր մարմինին բոլոր անդամները մեր գլխէն ելած հրամաններուն համեմատ կը շարժին, նոյնպէս ալ Քրիստոսի անդամները՝ որ մենք հաւատացեալներս ենք, հնազանդելու ենք Անկէ, մեր գլխէն, մեզի եկած հրամաններուն: «Մենք Անոր ձեռագործն ենք, Քրիստոս Յիսուսով ստեղծուած բարի գործերու համար, որոնց Աստուած առաջուրնէ պատրաստեց մեզ, որպէսզի անոնց մէջ քալենք»: Մեզի բարի գործեր պատրաստուած են որոնց մէջ քալելու ենք մեր վերկութիւն գտած վայրկեանէն սկսեալ: Եւ մեր բոլոր գործերը այնպէս ընելու ենք որ մենք Քրիստոսի մէկ թուղթը ներկայացնենք, ո'չ թէ մեկնով՝ այլ Սուրբ Հոգիին զրիչովը զրուած: Մեզ կարգացողները տեսնելու են Գառնուկին կեանքին մէկ էջը: Եթէ այսպէս բոլորովին Անոր յանձնուած ապրինք, ճշում չենք զգար, երբ մեր ծառայութեան մէջ արդիւնք չտեսնենք, ոչ ալ կը հպարտանանք, երբ ծառայութեան արդիւնքը վայելենք:

O. STOCKMAYER

ՍԱՄՍՐԻԱՅԻ ՄԷՋ ՄԻՆԱԿ

(Կարգա Գ. Թագ. ԻՔ. գլխ.)

Այն հոգեւորմեծուն, որոնք իրենց տեղական համայնքին մէջ յաճախ առանձին եւ միմալ կ'զգան լնքվինքսին, կը Թեաղրենք ուշի ուշով կարգալ այս յօդուածը, որ վերջերս երեւցաւ հոգեւոր Թերթի մը մէջ, Նոսման Աստուածաբանական դպրոցի հիմնադիր եւ տնօրէն Dr. Sai. Hensh կողմէ:

Չորս հարիւր հատ էին անոնք, բոլորն ալ Տէրոջը մարգարէներ. նկատեցէք, ոչ թէ Բահադի, ոչ ալ Աստարովթի (Այս վերջինները Կիսոն հեղեղատին քով եղիայի հրամանովը շարդուած էին): Իսկ այս չորս հարիւրը անկասկած այն մարգարէից որդիներէն էին, որոնց խօսքը եղած է բաւական յաճախ Իսրայէլի պատմութեան մէջ, մասնաւորապէս պատմութեան այս շրջանին՝ Բեթէլի, Երիքովի ու զեռ թերեւս ուրիշ տեղերու մէջ հաստատուած զպրոցներուն աշակերտներէն. աստուածաբանական դպրոցներ, ուր հաւանաբար Մովսիսական վարդապետութեանց եւ պատուիրանքներուն խառնուած էր Յերոբոամի շինած ոսկիէ որթերուն պաշտամունքը. պաշտամունք մը՝ որ անկասկած իր երկար արմատները պահած էր այս խառնա-

պարանոց» ժողովուրդին մէջ՝ անոնց Եգիպտոսի երկրէն ելլելէն ի վեր... Ա'հ, հաւատքի այս խառն դրութիւնը մեր օրերուն չէ՝ որ սկսած է:

Այս չորս հարիւր մարգարէները կանչուեցան Աքաաբի հրամանին վրայ՝ գոհացնելու համար իրեն դաշնակցող Յովսափատի փափաքը: Տարօրինակ դաշնակցութիւն: Յովսափատ ճշմարիտ Աստուծոյն անկեղծ մէկ երկրպագուն է, բայց նա ծանր յանցանք մըն է գործած՝ իրմէ ետքը իր գահը ժառանգող իր տղան Յովրամի կին առած ըլլալով Աքաաբի մէկ աղջիկը: Նա չկասկածիր (զիւրահաւան Յովսափատ) թէ այս կինը Աթալիա, գարշելի Յեզաբէլի արժանի աղջիկը՝ սուրի բերնէ պիտի անցնէ իր սերունդը: Դաւիթի սերունդը ամբողջովին, ի բաց առեալ մանուկ մը, եւ թէ նա Բահադի պաշտամունքը երուսաղէմի սրտին մէջ պիտի հաստատէ:

Յովսափատի խնամութեան դիտաւորութիւնները անկասկած լաւ են. նա կ'երեւակայէ այսպէսով ապգին երկու թագաւորութիւնները իրարու մերձեցնել. չէ՞ որ մինչեւ Սողոմոնի մահը ազգը մէկ եւ անբաժան էր: Այս երկու կոտորակները չէն որ Աստուծոյ ժողովուրդը կը կազմեն: Բարեգործութիւն մը պիտի չըլլա՞ր զանոնք ի նորոյ միացնել: Այս գեղեցիկ արդիւնքին հասնելու համար չա՞րժեք թուլատու զտնուիլ նոյնիսկ աստուածային օրէնքին հանդէպ մի քանի զանցառութիւններու:

Այսպէս է, հաւանաբար Յովսափատի պատճառաբանութիւնը Ասորոց դէմ Աքաաբի հետ զինուորական դաշնակցութիւն մը կնքելու իր յօժարութեան: Մարմնաւոր իմաստութիւն հակառակ աստուածային պատուէրներուն, որոնք կ'արգիլէին այս տեսակ դաշնակցութիւնները:

Այս չորս հարիւրը համամիտ են. ասկէ աւելի կատարեալ միաձայնութիւն երբեք չէ տեսնուած: Ո'չ մէկը աշակարծիք է այս բազմաթիւ եւ մեծագոյն եկեղեցական ժողովին մէջ: Անոնցմէ մէկը երկաթէ եղջիւրներով զինուած երկու թագաւորներուն անշուստ քահանայէն կը կատարէ եւ խօսքը Աքաաբի ուղղելով կ'ըսէ, «Տէրը այսպէս կ'ըսէ, Ասորիները ասոնցմով պիտի զարնես, մինչեւ որ զանոնք բնաջինջ ընես»: Թշուառակա՛նը, որ կը համարձակի իր քծնումին իրեն ներշնչած խօսքերը Տէրոջը վերագրել: Ժիշդ է թէ երբ տարի առաջ Իսրայէլի թագաւորը յաղթած էր Ասորոց թագաւորին: Եթէ Աքաաբ մինակը Բահադի վրայ փառաւոր յաղթանակ մը տարած էր, ինչպէս կասկածիլ թէ Յուդա եւ Իսրայէլ միասին իրենց երկու թագաւորներուն առաջնորդութեամբ այս անգամ նոյն թշնամին չպիտի յաղթահարէին...: Սուտ մարգարէն ուրեմն կը կարծէ ստոյգը խօսած ըլլալ:

Սյո, բայց այս սուտ մարգարէն եւ իրեն հետ հող չորս հարիւրը կը մոռնան թէ Աստուած միշտ

մարդկային նախատեսութեանց համաձայն չգործեր, անոնք չեն գիտեր թէ Աքաաբի հանդէպ Տէրոջը համբերութիւնը լեցուած է, եւ Եղիայի բերնով խօսուած վճիռը պիտի կատարուի. արդար Նաբովթի արեան վրէժը պիտի լուծուի. Աքաաբ պիտի մեռնի:

Սուտ մարգարէները այս ըլլալիքը չեն գիտեր: Ո՛չ իրենց երկաթ եղջիւրներով զլխաւորը, ո՛չ իրենք, ո՛չ ալ Աքաաբ, աւա՛ղ Աստուծոյ Իր կամքը չեն հարցուցած եւ Տէրոջը հետ համաձայն չըլլալով՝ անոնք ստութեան ոգիի մը մատնուած են:

* * *

Իսկ Յովսափատ թէեւ շատ կը փափաքի իր ողորմելի դաշնակիցին անհաճոյ չըլլալ, սակայն եւ այնպէս անհանգիստ է: Չորս հարիւրին այս միաձայնութիւնը, այս մեծխօսութիւնները, այս ինքնահաւանութիւնը իրեն կասկած կը ներշնչեն: Այսպէս չէ որ կը խօսին եւ կը գործեն ճշմարիտ Աստուծոյ մարդիկը: «Այս տեղ», կը հարցնէ անիկա Աքաաբին, «Տէրոջը ուրիշ մարգարէ մըն ալ չկա՞յ որ անոր հարցնենք»:

Անկասկած Յովսափատ լսած էր Եղիայի, թերեւս նաեւ Եղիսէի վրայով: Ո՛ւր պահուած էին անոնք: Ինչո՞ւ հոս չեն անոնք: Սբ. Գիրքը այս մասին մեզի բան մը չըսեր, բայց կրնանք ենթադրել թէ մեծ մարգարէն եւ անոր ծառան ստիպուած էին Յեզաբէլի եւ անոր վատ ամուսնոյն հալածանքէն անապատը եւ կամ Կարմեղոսի քարայրներէն մէկուն մէջ պահուելու...: Ո՛հ, երբ յայտնի կամ գաղտնի հալածանքով ընդդիմամարտ տարրերը կը բռնադատեն Աստուծոյ ծառաներուն իրենց բերանը զոցել, իրաւ գործ կ'ըլլայ, մեծ աղմուկ եւ աղաղակ, բայց ո՛չ ճշմարիտ հոգեւոր գործ:

*

* * *

Կը մնայ սակայն մարդ մը Եղիայի տեսակէն, այս մարդը Միքիան է: (Պէտք չէ շփոթել մարգարէութիւնը գրող Միքիային հետ): Աքաաբ այս մարգարէին իրեն ներշնչած ատելութիւնը չպահեր, բայց չի կըրնար Յովսափատը արգիլել զայն լսելէ: Մարդկը զընկէ զայն բերելու... Ո՛ւրկէ՞... թերեւս բանտէն: Յամենայն դէպս եթէ հոնկէ չէ որ պիտի բերեն, հոն Վ ուր զինքը պիտի առաջնորդեն պահ մը յետոյ, երբ ըր խօսքը լմնայ:

Ներքինի մը կը զրկուի Միքիան բերելու, որ անոր այսպէս կը խօսի, «Ահա ամէն մարգարէները մէկ բերնով թագաւորին համար բարութիւն խօսեցան, թող քու խօսքդ ալ անոնց մէկուն խօսքին պէս ըլլայ»: Այս ըսել է.— Չորս հարիւրին խումբէն զատուելու չափ յիմար մի ըլլար, հոսանքին հետեւէ. զայլերուն հետ ոռնա՛, ոչխարներուն հետ մայէ՛: Քու բողոքներդ ոչ մէկ բան կրնան փոխել կամ արգիլել. դուն ինքզինքդ անօգուտ չարչարանքներու եւ թերեւս մահուան վտանգին կ'ենթարկես. դուն Յուդայի թագաւոր Յովսափատէն աւելի՞ բարեպաշտ ես, անիկա ինքն ալ

մեր ամենուն հետ համամիտ է»:

Ի՛նչ քծնողի խրատներ:

Բայց Միքիայի պատասխանը այնքան սքանչելի է, այնքան հերոսական, այնքան ճշմարտապէս ներշնչեալ որ բոլոր այս վատութիւններուն դէմ մեզ կը մխիթարէ. «Տէրը կենդանի է որ Տէրը ինչ որ ըսէ, զայն պիտի խօսիմ»:

Ահաւասիկ, ահաւասիկ ճշմարիտ մարգարէին նշանաբանը, բոլոր երկիրներուն մէջ, բոլոր ժամանակներու մէջ:

Քաղաքականութիւնը, մարդկային վարպետութիւնը, կեղծ համաձայնութեանց արուեստը, խիղճի եւ հաւատքի սուրբ շրջանակին մէջ տեղ չունին: Իրա՛ւ յարգանքի արժանի է Միքիա, որ գիտցաւ մինակ կենալ այս խուժանին մէջ. մինակ, բայց Աստուծոյ հետ: Իր խօսքերով մէկն ալ չապաշխարեց. Աքաաբ իր վախկոտութեան չափը լեցուց՝ պատեւազմին մէջ ծպտուած մտնելով, (անկասկած անոր մարգարէութիւններէն ազդուած, թէեւ ինքը զայս չխոստովանիր) բայց ասիկա Նաբովթի սպանութենէն յետոյ Եղիայի միջոցաւ խօսուած մահաւճիռին այսօր կատարուիլը չարգիլեր. «Այն տեղը՝ ուր շունքը Նաբովթի արիւնը լափեցին, հոն շունքը քու արիւնդ ալ պիտի լափեն»:

Ո՛վ Միքիա, Յովսափատ իր մեղաւոր դաշնակցութիւնը չխզեց. պարտազանց մարգարէներէն եւ ոչ մին Միքիայի կողմը բռնեց: Դուն բանտ պիտի երթաս ու թերեւս հոն պիտի մեռնիս... բայց գոնէ քու խօսքերդ Սրբազան Գիրքին մէջ պիտի մնան մինչեւ դարերուն վերջը. անոնք հոն պիտի մնան ամենուն հոչակելու նոր Ուխտին՝ ինչպէս նաեւ Հին Ուխտին մարդոց, թէ Աստուած Ինքզինքը երբեք առանց վկաներու չլքողուր, եւ թէ մարմնաւոր Իսրայէլի Տոցին թէ՛ միշտ հաւատարիմ փոքրամասնութիւն մը կայ, հողեւոր Իսրայէլը:

*

* * *

Եւ մենք Քրիստոսը սիրողներս, ամենամեծ մեղակեացին նման, որոնց վրայ Աստուած կորսուած հոգիները փնտռելու պարտքը դրած է, զանոնք Յիսուս Քրիստոսի առաջնորդելու եւ անոնց սորվեցնելու ամէն ինչ որ Անիկա հրամայած է, մենք մեզի իբր նշանաբան պիտի չառնենք Միքիայի խօսքը, «Տէրը ինձի ինչ որ ըսէ, զայն պիտի խօսիմ իմ շրջանակիս մէջ, իմ եկեղեցիիս մէջ»...:

Ո՛վ Աստուած, մեզի հաւատարիմ փոքրամասնութենէն ըլլալու շնորհքն ըրէ, առանց ատելութեան և առանց վախի, առանց ամօթի եւ առանց հպարտութեան:

Ա.ՉԱՏ ԹԻԳՄ.

ՕՐՀՆԵԱԼ ԿԵԱՆՔԻՆ ՆԵՐԿԱՆ

Dr. F. B. Meyer

«ԿԸ ԹԱԳԱՌՈՐԷ»

(Յայտթ. ԺԺ. 6)

Մարդկային կեանքին եւ պատմութեան ինչպիսի՛ հայելի մըն է Յայտութեան գիրքը: Կը թուի թէ կանգնած ես մեծ ռազմազաշտի մը մէջ: Չորս դին գինեալ զունդերը ճակատամարտի բաղխիւններով կը խորտակուին: Լուսաճաճանչ լէզէոններ մահացու պայքարի մը բռնուած են դժոխքի մթնաստուեր գոնդերուն հետ: Ոտնակոխեալներու աղաղակները, մահամերձներու ու նահատակուած զոհերու ողբն ու կոծը, հնչեղ կը թրթռայ գեփիւռին թեւերուն վրայ: Սակայն այս բոլոր ժխորին ու թնդիւնին մէջէն կրկին և կրկին վեր կը բարձրանան փրկեալներու եւ յաղթողներու քաղցր եւ արծաթհնչիւն խմբերգները որք կը քաջալերեն նուաղկոտները, կը զօտեպնդեն յուսալիքները և կ'ողջունեն երկինքի վերջնական յաղթանակին բիւրեղացող նշանները: Մեր աչաց առջեւ ունեցած տողերուն մէջէն այսպիսի խմբերք մ'է որ կը հնչէ մեր ականջներուն եւ սրտերուն մէջ: Յայտթ. ԺԺ. 6:

Նախորդ գլուխները լեցուն են տազնապով ու ընդհարումներով: Պատերազմի խորը մխուած է աշխարհի մէկ ծայրէն միւսը եւ հաւատուրաց եւ խոտորեալ եկեղեցին կ'ընդունի իր դատապարտութիւնը: Ինչպէս աղօրքի քար մը հզօր հրեշտակի մը ձեռամբ կրնայ նետուիլ ովկէսին մէջ, այնպէս ալ Բաբելոն վար նետուած է այլեւս բնաւ չգտնուելու համար, եւ մինչ Բաբելոն կ'ընկղմի, մեծ բազմութեան ձայն մը կը լսուի երկինքի մէջ որ կ'ըսէ, «Ալէլուիա»: ապա նորէն քսանըչորս երէցներն ու չորս կենդանի էակները կ'ըսեն, «Ամէն, Ալէլուիա»: Յետոյ առանձին ձայն մ'ալ կը լսուի որ կը բարձրանայ աթոռէն նոր օրհնաբանութեանց հրաւիրելով եւ իբր պատասխան Յովհաննէս առաքեալը մեզ կ'ըսէ, «Եւ լսեցի շատ բազմութեան ձայնի պէս ու շատ ջուրերու ձայնի պէս ու սաստիկ որոտումներու ձայնի պէս որոնք կ'ըսէին, Ալէլուիա, վասնզի ամենակալ Տէր Աստուածը թագաւորեց»: Այո, միշտ Ալէլուիաներու խմբերգ մը կայ երբոր Տէրը կը թագաւորէ:

Շատ չանցած մենք ալ այդ յաղթութեան երգին պիտի ձայնակցինք: Իւրաքանչիւր արեւածագ զայն աւելի կը մօտեցնէ մեզի: Բայց պէտք է ունինք հազարամեայ թագաւորութեան հաստատուելուն սպասելու՝ լսելու կամ բարձրացնելու համար հնչեղ աղաղակը, «Ալէլուիա»: Հիմա ալ աշխարհի չորս դին կրնանք լսել անոր թնդիւնը. կը լսենք մինչ այն բերկրալի կը ժայթքէ փրկուած սրտերէ, յանձ-

նուած կեանքերէ որոնք սորված են թէ Յիսուսի իշխանութիւնը միշտ կցուած է Ալէլուիաներու խմբերգին:

Հին Կտակարանն իսկ զայս կը սորվեցնէ Կրեք անմոռանալի Սաղմոսներով, ԴԳ. ԴԷ. և ԴԺ. որոնք գրեթէ նոյն էջին վրայ կ'իյնան: Առաջինը կը սորվեցնէ Անոր բնութեան վրայ թագաւորելը: Կը լսենք կոհակներուն փշուրիլը, ծովուն շառաչիւն ալիքները կը բարձրացնեն իրենց ձայները, բայց Տէրը ի բարձունս է՝ն զօրաւորէն իսկ հզօր է. «Տէրը կը թագաւորէ. Ալէլուիա»:

Երկրորդը կը ներկայացնէ իր թագաւորութիւնը մարդոց վրայ: Իր թշնամիները եւ «Դստերք Յուգայ» հաւասարապէս կ'իւրացնեն իր իշխանութիւնը: Ամենէն անտաբերն ու անպատամքներն իսկ ձեռնտու են իր ծրագիրներուն: «Անիկա երկինքի զօրքերուն մէջ ու երկրի բնակիչներուն մէջ իր ուզածը կը գործէ (Դան. Դ. 35): Մարդիկ կը դաւադրեն, ուզածնին կ'հնարեն բայց միայն լրացնելու համար ինչ որ Իր ձեռքն ու խորհուրդը կանխորոշեց որ ըլլայ: Եւ նկատի կ'առնենք իր արապետութեան փառքին իրականութիւնը — որ չդադարիր իրողութիւն մը ըլլալէն եւ թակահարէն ըմբռնուած չըլլալուն համար — վերստին կ'աղաղակենք, «Տէրը կը թագաւորէ, Ալէլուիա»:

Երրորդը կը սորվեցնէ թէ իր թագաւորութիւնը սրբոց վրայ է: «Տէր ի Սիօն մեծ է» Սուրբերը եկեղեցիին համար միակ գերագոյն զխաւորութիւն մը կ'ընդունին, մինչ սեւեռուն կը նային Անոր որ կ'առաջնորդէ եկեղեցիին ընթացքին, կառավարելով անոր աշխարհավարութիւնը, առանց ազդուելու մեր մէջ եղած առեւեղոյթս հակասութիւններէն ու անմիաբանութենէն, ու դարձեալ կը գոչեն, «Տէրը կը թագաւորէ, Ալէլուիա»:

Բայց անտարակոյս այս բոլորը աւելի զաւել կը յարմարի մեր անհատական փորձառութեանց: Մենք բնաւ չգիտցանք թէ ինչ էր իրական ուրախութիւնը մինչեւ որ հեղ եւ խոնարհ Փրկիչը իբր մեր սրտին թագաւորը իր յաղթական մուտքը կատարեց: Սակայն յառաջ քան այդ ժամը մենք խոտորած էինք խռովութիւնով ու ապստամբութիւնով, ձախողանքի եւ յուսախաբութեան դառն փորձառութիւններով, անիշխանութեան պարտասող գիտակցութիւնով մը զոր անկարող էինք զսպելու: Սակայն նա մուտ գործեց իր իշխանութիւնը հաստատելու «Ովսաննա» աղաղակը հնչեց ու լեցուց մեր ներքին էութեան միջնաբերդը: Ու այնպէս թուեցաւ թէ հրեշտակային ձայներ երգեցին մեզի, «Մեծապէս ուրախացիր եւ մի զարհուրիր, քու թագաւորդ քեզի կուգայ»:

Ա՛հ, Սատանային սուտը շատ լաւ յաջողած է մարդիկ առաջնորդելով խորհելու թէ Գրիստոսի իշխանութիւնը թշուառութիւն եւ զրկանք կը նշա-

նակէ: Սուտին հաւատալնուն պատճառաւ է որ շատեր բոլորովին խուսափած եւ ինքզինքնին զրկած են այս իշխանութենէն: Կամ իրենց էութեան միայն մէկ մասը հպատակեցուցած են իր օրհնեալ կառավարութեան, Անոր տալով միայն շրջակաները, մինչ իրենց համար կը վերապահեն միջնաբերդը, Սիօնը:

Իսկ անոնք որ գիտեն թէ ի՞նչ է բովանդակ էութիւնը յանձնել իր իշխանութեան, գիտեն թէ ուր իր իշխանութիւնը կը մեծնայ, հոն խաղաղութիւնն ալ կ'աճի եւ ասոնց երկուքին սահման չկայ: Եւ. Թ. 7:

Երանի՛ թէ ոմանք որ ապրած են դառն եւ արեւաբոլոր կեանք մը, կարենային վար առնել ապստամբութեան դրօշը, բարի գալուստ մտղթելու թագաւորին՝ որուն իշխանութիւնը հիմնուած է իր քահանայապետութեան վրայ, ճշմարիտ Մեղքեղեկ քահանայ թագաւորը: Եւ մինչ փառաց թագաւորը կ'անցնի բարձրացուած դռներէն, եւ իր դրօշակը կը ծածանի կամքին միջնաբերդէն, ուժգին պիտի հնչէ նոյն աղաղակը, «Ալէլուիա, ամենակալ Տէրը կը թագաւորէ»:

Գու գործդ միայն իր առջեւը դռները բանալ է. եւ Ան պիտի նուաճէ ամէն հեղինակութիւն եւ զօրութիւն, պիտի գերեզմարէ ամէն խորհուրդ պարտեալ պահելով ապստամբ բնութիւնը:

Յիշէ թէ Ան ամենակարող է: Ամենակարող՝ յաղթելու, ամենակարող՝ պահելու, ամենակարող՝ իշխելու: Յայնժամ կեանքը երկար Ալէլուիա մը պիտի ըլլայ, հետզհետէ խորանալով ու քաղցրանալով մինչ տարիները կը գլորին կ'անցնին... : Ո՛չ մէկ զէպը պիտի խանգարէ կամ շփոթէ, զի ամէն պարագայի մէջ պիտի տեսնենք մեր թագաւորին վճիռին մէկ արդիւնքը: Եւ զայս սիրենք կամ ոչ, մեզի ցաւ պատճառէ կամ ոչ, օրն արեւոտ ըլլայ կամ փոթորկոտ, պիտի կարողանանք գոչել:

«ԱԼԷԼՈՒԻԱ»

Ձի Ամենակալ Տէր Աստուածը
ԿԸ ԹԱԳԱՒՈՐԷ՛

ՀԱՒԱՏՔ ԳՈՐԾ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Տր. Ֆրէնզ Օլիվըր, Անգլիոյ մէջ իր վարած աւետարանչական ժողովներէն միայն մէջ հետեւեալ հետաքրքրական դրուագը պատմեց:

Ամերիկայի արեւմտեան նահանգներուն մէկուն մէջ աւետարանչական ժողով մը կը վարէի: Այդ օրը վաճառատան մը տնօրէնը Գրիստոսը ընդունեց և հրապարակաւ զԱյն դաւանեցաւ, յետոյ հետս առանձին տեսակցութիւն մը խնդրեց: Գրեթէ ժամ մը տեւեց մեր խօսակցութիւնը որուն միջոցին պատմեց որ թէպէտ շատ զոհացուցիչ կերպով կը վարձատրուէր իր մատուցած ծառայութեան համար, բայց տարին

հազար Անգլ. ոսկիի գումար մը կ'իւրացնէր: Հակառակ սակախ այս զոգութեան՝ յաջողած էր ամէն տարի լաւ շահ մը բերել հաստատութեան որ այլեւայլ քաղաքներու մէջ մասնաճիւղեր ունէր: Խոստովանութիւնը ընելէն վերջը, ընդունեց նաեւ թէ զոգցած ստակն ալ մսխած էր անառակ կեանք մը վարելով եւ վերջապէս իմ խորհուրդս հարցուց այս մասին:

Ըսի թէ՛ կարելի եղածին չափ շուտ պարտէր գործատիրոջ երթալ, ու այս խնդրոյն շուրջ անվերապահ խոստովանութիւն մը ընել, խնդրը միանգամ ընդմիշտ կարգադրել, նոյնիսկ եթէ այս քայլը զինքը բանտ առաջնորդէր: Մարդը անմիջապէս հեռագրեց գործատիրոջ եւ տեսակցութիւն մը խնդրեց: Գործատէրը առանց ժամանակ կորսնցնելու պատահանեց կոչին: Տեսակցութեան ընթացքին շատ հաժեերութեամբ մտիկ ըրաւ այս տրտմազին խոստովանութեան, ապա խնդրեց որ առ այժմ մեկնի եւ երկու ժամէն վերադառնայ երկրորդ անգամ մ'ալ զինքը տեսնելու:

Երկու ժամուայ ընթացքին խղճամիտ գործատէրը, ուշադրութեամբ խորհրդածեց իրեն եղած խոստովանութեան վրայ: Որոշուած ժամանակին երբ երկու մարդիկը կրկին հանդիպեցան, գործատէրը ըսաւ զինքը խաբող պաշտօնեային, «Ես քրիստոնեայ մօր մը կրթութեամբը մեծցած եմ, եւ զրապէս զիտեմ որ այս քու խոստովանութեանդ պատճառը ուրիշ բան չէ, այլ միայն Աստուծոյ շնորհքին մէկ հրաշքը: Արդ եթէ քու ձեռքդ կուտաս ու կը խոստանաս ըլլալ ուղիղ, եւ իմ գործերս վարել իբր ճշմարիտ քրիստոնեայ մը, խնցեալը պիտի մոռնամ»: Պահ մը վերջը աւելցուց, «Ես քրիստոնեայ մը չեմ եղած, բայց պէտք է որ ըլլամ»:

«Գոսն տարի վերջը» շարունակեց Տր. Օլիվըր, «Նիւ Եօքթի մէջ կը քարոզէի: Ժողովէն վերջը աւելհեր մարդ մը ինծի մօտեցաւ ու ձեռքս սեղմելով, «Չե՛ս յիշեր զիս» ըսաւ: «Քեզ երբեք չպիտի մոռնամ» պատասխանեցի մարդուն. «բայց ըսէ տեսնեմ, ի՞նչպէս անցուցիր քու քսան տարիներդ, այն ատենէն ի վեր որ Գրիստոսը քու անձնական Փրկիչդ ընդունեցիր»: «Սքանչելի, զիտէք չէ՞, որ կրկնակ ներդրութեան մը արժանացայ այն օրը երբ Փրկիչս գտայ: Աստուած ներեց բոլոր մեղքերս, իսկ գործատէրս՝ ամօթալի անհաւատարմութիւնս»: Ապա յարեց յուզմամբ, «Ահա Աստուծոյ դառը որ աշխարհի մեղքը կը վերցնէ»:



ՏԵՐՈՉՄՈՎ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ

Ուրախութիւնը միայն Աստուծոյ մէջ կը գտնուի: Տխրութիւնը միայն պղտոր խղճի մը մէջ:

Զղջացող սրտի մը արցունքներուն մէջ աւելի շատ ուրախութիւն կայ քան թէ չար սրտի մը բոլոր խնդուքներուն մէջ:

Քրիստոնեայ մը պէտք է ամենուն ցուցնէ թէ քրիստոնէութեան մէջ ի՞նչ կենդանութիւն կայ: Քրիստոնէութիւնը պէտք է մեր սրտերուն մխիթարութիւնը ըլլալով մէկտեղ՝ նաեւ մեր պարծանքը ըլլայ:

Մեզի ոչ թէ միայն թոյլ տրուած է, հապա նաեւ հրամայուած է Տէրոջմով ուրախանալ: Ոչ մի ուրախութիւն պիտի լաւ եւ հաստատ հիմ մը ունի որքան Յիսուսի մէջ գտնուած ուրախութիւնը: Այս ուրախութեան աղբիւրը եւ միակ աղբիւրը Քրիստոսի հետ ճշմարիտ միացման եւ յարաբերութեան մէջ կը գտնուի, ասկից կը հետեւի կամեցողութիւն մը սիրելու, հնազանդելու եւ փառաւորելու զԱյն՝ որչափ ատեն որ կ'ապրինք:

Ուրախութիւնը քրիստոնեային պարտականութիւնն է, փառքը եւ առողջութիւնն է, իր հոգիին արեւն է: Աստուծոյ հաւատալով մեր ուրախութիւնը կ'սկսի: ԶԱստուծոյ փառաւորելով մեր ուրախութիւնը կ'աճի: ԶԱստուծոյ սիրելով մեր ուրախութիւնը կը հասունայ:

Աստուածապաշտութեան իւրաքանչիւր ճիւղ՝ ուրախութիւն կը ներշնչէ:

Մարդոցմէ ոմանք կը վախճան կրօնի մէջ ուրախութիւն տեսնել: Իրենք չունին՝ եւ ուրիշներու մօտ ալ զայն տեսնել չեն ուզեր: Ոմանց կրօնքը կը նմանի աստղերուն, շատ բարձր եւ շատ յստակ՝ բայց շատ պաղ: Երբ անոնք անձկութեան կամ ուրախութեան արցունքներ տեսնեն՝ կ'ըսեն, «Ասիկա շղապրութիւնն է»: Ի՞նչ սխալ կարծիք քրիստոնէութեան վրայով:

«Ինչպէս է փուշերուն ձայնը կաթսային տակ յիմարներուն ծիծաղն ալ այնպէս է», Ժող. Է. 6:

Յիսուս ըսաւ, «Ուրախացէ՛ք քիչ չէ՛ք սոսիսիս երկինքը գրուած են, Ղուկ. Ժ. 20:

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԷՆԻԻ ԵՒ ՎԷՆԻԻ ԱՌԱՋԻՆ ԻՐԱԿԱՆ ԱՂԹԹԻՐ

Երկու քոյրեր, մին հինգ տարեկան եւ միւսը անկէ քիչ մը մեծ, ամէն շաբաթ առտու կ'երթային իրենց տունէն բաւական հեռու գտնուած խանութ մը տաշուք բերելու:

Շաբաթ առաւօտ մը, երբ լեցուն կողովով տուն

կը վերադառնային, մեծ քոյրը սաստիկ ցաւէ մը բռնուած անկարող եղաւ տեղէն շարժելու: Փողոցը ամայի էր եւ ոչ ոք կ'երեւէր: Միայն գործարաններ կային տեղ տեղ, որոնց մէջ գործաւորները իրենց օրական գործին կը հետեւէին: Փոքրիկները չէին համարձակեր գործարան մը մտնել եւ շուարած էին թէ ի՞նչ պիտի ընէին: Մէյ մըն ալ մեծ քոյրը ըսաւ, «Գիտե՞ս, էնի, քանի մը օր առաջ մայրիկը ըսաւ թէ որեւէ պարագայի որ նեղութեան մը հանդիպինք, աղօթք ընենք եւ Աստուծոյ մեզի պ'ոչ օգնէ: Ինձի օգնէ որ ծունկի գամ եւ զիս բռնէ որ չիյնամ ու միասին աղօթենք»: Հոն, փողոցին վրայ երկու փոքրիկները Աստուծոյ խնդրեցին որ մէկը զրկէր իրենց՝ զիրենք տուն հասցնելու համար: Աղօթքէն վերջ հոն նստած պատասխանին սպասեցին:

Մէյ մ'ալ էնին տեսաւ մարդ մը որ հեռաւոր գործարանէ մը դուրս ելլելով բոլորտիքը նայեցաւ ու կրկին ներս մտաւ:

«Ախ, քոյրիկ, այդ մարդը նորէն ներս գնաց», ըսաւ էնի յուսախաբ: «Թերեւս անիկա այն մարդը չէ, որ Աստուծոյ մեզի զրկել կ'ուզէ, եթէ Աստուծոյ զրկելիք մարդն է, նորէն դուրս կ'ուզայ», պատասխանեց Վինի:

«Ահա նորէն կ'ուզայ, տե՛ս, այս կողմ կը դառնայ. կարծես թէ բան մը կը փնտռէ. կամաց կը քալէ եւ գլխուն վրայ գլխարկ չկայ. գլուխը ձեռքին մէջ կ'առնէ. այնպէս կը թուի թէ ինչ ընելը չգիտեր: Բայց տե՛ս քոյրիկ, նորէն ներս մտաւ, մենք ի՞նչ պիտի ընենք»:

«Թերեւս ատիկա Աստուծոյ զրկելիք մարդը չէ, եթէ ան է, անշուշտ նորէն պիտի գայ», պատասխանեց Վինի:

«Տե՛ս, նորէն դուրս եկաւ եւ այս անգամ գլխարկ ունի գլխուն վրայ», ըսաւ էնի: «Այս կողմ կ'ուզայ բոլորտիքը նայելով եւ բան մը փնտռելով: Մեզ չտեսներ, կ'երեւի թէ ծառերը արգելք կ'ըլլան: Հիմա տեսաւ եւ քայլերը արագացուց»:

«Ի՞նչ կայ փոքրիկներ», հարցուց պարոնը:

«Քոյրիկս շատ հիւանդ է, չկրնար քալել եւ մենք չենք կրնար տուն երթալ», պատասխանեց էնի:

«Ո՛ւր կը բնակիք»:

«Այս փողոցին ծայրը, ասկից կը տեսնուի մեր տունը»:

«Հոգ չէ, ես ձեզ կը տանիմ», ըսաւ բարի պարոնը եւ հիւանդ փոքրիկը իր գիրկը առած տուն տարաւ: Մայրիկը զարմանքով եւ միեւնոյն

ժամանակ ուրախութեամբ իր փոքրիկ գանձը առնելով մահիճ տարաւ, շնորհակալութիւնը յայտնելով բարի պարոնին:

Մարդը կարծես բան մը ըսել կ'ուզէր, բայց չէր համարձակեր: «կ'ուզէք որ բա՞ն մը վճարեմ Ձեր մատուցած ծառայութեան համար» հարցուց մայրը:

«Ո՛հ, ոչ», պատասխանեց մարդը արտասուքով: «Ո՛չ, ոչ, Աստուած զիս արդէն կը վարձատրէ»:

«Ես մեկնի գործարանի մը գործատէրն եմ: Գործաւորներէս իւրաքանչիւրը իր տեսած գործին համեմատ վարձք կ'առնէ եւ ամէն մէկին համար առանձին հաշիւ պահելու եմ: Հաշիւներուս մէջ քիչ մը ետ մնացած էի եւ հապճեպով կ'աշխատէի որպէսզի գործս լմնցնէի, սակայն յանկարծ աչքիս առջեւ մթնցաւ եւ չկրցի առջեւս գտնուած թուանշանները տեսնել. միեւնոյն ժամանակ այն ազդեցութեան տակ կը գոնուէի թէ դուրսը մէկը իմ օգնութեանս պէտք ունէր: Դուրս ելա, վեր վար նայեցայ, սակայն մէկը չտեսնելով կըրկին ներս վերադարձայ: Աչքիս առջեւի մթութիւնը աւելի սաստկացաւ, աւելի սաստկացաւ նաեւ այն ազդեցութիւնը թէ դուրսը մէկը իմ օգնութեանս կը կարօտէր: Կրկին դուրս ելայ, վեր վար նայեցայ եւ շուարած մնացի: Արդեօք ծանր աշխատանքս եւ գործի հոգս զիս խելքէ՞ կը հանէին: Անկարող լուծելու, դարձեալ գործարան վերադարձայ: Այս անգամին անկարող էի նոյնիսկ մատերովս գրիչս բռնելու եւ բառ մը կամ թուանշան մը գրելու. մտքիս ճնշումը թէ մէկը իմ օգնութեանս կը կ'արօտէր, ա'լ աւելի սաստկացած էր: Գլխարկս առնելով դուրս ելայ: Ներս պիտի չմտնէի մինչեւ որ վստահ ըլլայի թէ արդեօք խեղճ կորսնցուցած էի թէ իրապէս պարտականութիւն մը կար առջեւս: Բաւական տեղ քալեցի. շփոթութիւնս կ'աւելնար եւ զիս կը տանջէր. մէյ մըն ալ ինքզինքս փոքրիկներուն առջեւ գտայ եւ տեսայ թէ իրապէս իմ օգնութեանս պէտք կար: Սակայն չեմ կրնար հասկընալ թէ ինչո՞ւ Տէրը այս նեղութիւնը պատճառեց»:

Ազնիւ պարոնը այս խօսքերով հեռանալու վրայ էր երբ փոքրիկ աղջիկը պատասխանեց՝ «Մայրիկ, մենք աղօթք ըրինք»:

Անեղծուածը լուծուած էր, եւ բարեսիրտ գործարանատէրը արտասուածոր աչքերով, յուզուած սրտով եւ երախտագէտ ու խոնարհ զգացումով իր հաշիւներուն վերադարձաւ:


Թարգմ. ԱՆԳԼԻԱՐԷՆԷ

Le Gérant: Mr. le PASTEUR KALTENBACH

Տպար. «ԲԱՆԲԵՐ»-ի, Imp. Serres, 81, Rue A. Thiers M^{lle}.

Մեր պատի պատկերներէն.—

Պատի վրայ կախուելիք պատկերներէն «Տաւը կոյսերուն առաւիլը» ներկայացնողին մտնրանկարը կը զննեք ստորեւ գէթ գաղափար մը տալու անոնց որ պիտի սիրեն ապսպրել.—



Stille des Hirsches kommt, geht aus dem Talgen.

Պատկերին իսկականը շատ փափուկ գոյներով գունազեղ եւ խոտուն է. կ'արժէ որ ամէն մէկ տուն անկէ հատ մը ունենայ.—

Պատկերին մեծութիւնն է, լայնութիւնը 26 սանթ. եւ երկայնութիւնը 29 սանթ. գինն է 4 ֆրանք կամ 20 սէնթ թղթատարական ծախքով միտմին.—

Ստորեւ կը գտնենք ընթերցողները լայն ու նեղ ճամբային մտնրանկարը.—



Der breite und der schmale Weg.

Այս աւ գունաւոր է եւ Ս. գրական 200ի մօտ համարներով էի, տպագրուած պատկերին վրայ: Մեծութիւնն է, երկայնութիւն 63 սանթ. լայնութիւնը 51 սանթ. գին 6 ֆրանք կամ 30 սէնթ: Այս պատկերը, քանի որ այդքան համարներ ունի իր վրայ, տպագրական շատ մը դժուարութիւններու հետ կապւած է եւ սակայն այդ դժուարութիւնները սիրով պիտի ստանձնենք եթէ գիտնանք թէ զայն ունենալու փափաքողներ կան: Ուստի անոնք որ կը հետաքրքրուին ասով, թող մեզի գրեն յայտնելով նաեւ թէ քանի՞ հատ պատուելու պատասխանատուութիւնը կ'ստանձնեն: Եթէ բաւականաչափ թուով ապրանքներ ըլլան, այն ատեն պատկերին պատրաստութեան պիտի ձեռնարկենք:

Խմբ. «ԲԱՆԲԵՐ»-ի